Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(12 սեպտեմբերի 2017 թ., Սուրբ Էջմիածին)

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,

Հարգարժան դասախոսներ, սիրելի սաներ եւ ներկաներ,

Մեր ողջույն ու օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ, որ համախմբված եք այս հանդիսությանը:

Ուրախություն է մեր սրտերում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 ուսումնական տարվա բացման առիթով: Այս իրադարձությունն ամեն անգամ նոր հույսեր ու տեսլականներ է ձեւավորում, որոնք աղոթքով ու գործով պիտի իրականություն դառնան եւ արդյունքներ պարգեւեն մեր ազգին ու Սուրբ Եկեղեցուն: Ճեմարանի տեսչական եւ դասախոսական կազմը, նրանց փորձառությունն ու նվիրումը, ինչպես նաեւ մեր այս կրթական հաստատության արդեն պետականորեն ճանաչված բարձր կարգավիճակն ու ներառված առարկաների խորը ուսուցումը վստահություն են ներշնչում հոգեւորականների պատրաստության առաքելության արդյունավետ իրականացման:

Մեր Եկեղեցին մեծապես կարեւորել է եւ մեր ժողովուրդը մեծարել ազգային կյանքում հավատքով զորեղ, գիտելիքներով զինված, սիրո ու անձնվիրումի ոգով գործող հոգեւորականի սպասավորությունը, ինչպես պատմիչ Փավստոս Բուզանդն է տալիս ընութագիրը նվիրյալ հոգեւորականի. «Սուրբ եւ պայծառ հոգւով իբրեւ զքաջ սպառազէն Քրիստոսի»: Տիրոջ այդպիսի սպասավորն է դառնում մեր մեծագույն սրբերի ոգու կրողը, հավատացյալին դեպի փրկություն ու հավիտենական կյանք առաջնորդողը, Սուրբ Հոգու շնորհները բաշխողը: Քրիստոսի հավատարիմ սպասավորը չի ընորոշվում սոսկ իր կրած աքեմով, այլ ինքն է արժեւորում իր կոչումն ու համազգեստը, արգասավորում իր ստանձնած առաքելությունը, ի սեր Աստծո եւ ժողովրդի հաղթահարում փորձություններ, համբերությամբ ու ըմբռնումով տանում նաեւ զրկանքներ,

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ (12 սեպտեմբերի 2017 թ., Սուրբ Էջմիածին)

Տիրոջ սերն ու խաղաղությունը սփռում իր հավատավոր հոտի, իր ժողովրդի կյանքում:

Այսպիսի ընկալումով մեր հարգարժան դասախոսները, տեսչության գլխավորությամբ, պիտի իրականացնեն հոգեւորական կրթելու եւ դաստիարակելու առաքելությունը: Այս գիտակցությամբ նաեւ Մեր սիրելի սաները պիտի շարունակեն իրենց ընթացքը ճեմարանի օրհնյալ հարկից ներս՝ Սուրբ Եկեղեցու արժանավոր մշակ դառնալու՝ օրինակ ունենալով մեր լուսավորիչներին, թարգմանիչ վարդապետներին, Նարեկացուն, Շնորհալուն, Կոմիտասին եւ այլոց, որոնց փառքն ու գործը շողարձակել են մեր պատմության դարավոր ընթացքում եւ մշտալույս են մեր կյանքում: Ճեմարանի մեր սաները նաեւ օրինակ պիտի ունենան այն պարզհոգի եւ իմաստուն հովվին, որ գիտե հավատք կերտել, աստվածսիրության, ազգանվիրումի ու հայրենասիրության ոգին մշտարթուն պահել, որով զորացած հավատավոր հայորդիք ստանձնում են ամեն հանձնառություն ի սեր ազգի ու հայրենյաց, հանձնառություն անգամ նահատակությամբ մեր սրբությունները, հավատքն ու հայրենիքը պաշտպանելու:

Մեր հորդորն ու մաղթանքն է, որ այսպիսի ընկալումով առաջնորդվելով՝ ճեմարանի հարկից ներս տրվող գիտելիքները, փորձառությունը հիմնված լինեն աղոթքի, հոգեւոր ապրումների, մշտավառ հավատքի վրա՝ որպես ամուր վեմի, այլապես, մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատմած առակի նմանությամբ, հողմերը կկործանեն ավազի վրա շինվածն ու հաստատվածը (հմմտ. Մատթ. Է. 24-27):

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում տեսչությանը եւ դասախոսներին իրենց գովելի ծառայությունների, հանձնառությունների եւ աշխատանքի համար: Մեր գնահատանքը նաեւ սիրելի սաներին ուսումնառության մեջ հաջողությունների, Սուրբ Եկեղեցուն սպասավորելու ձգտումի համար:

Աղոթում ենք առ Տերն ամենակալ, որ Աստծո Աջը հովանի լինի ամենքիդ եւ առաջնորդի ուսումնական կյանքի ճանապարհով՝ ապահովելով բարի արդյունքներ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարեւր»: